



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՀՈՒԿՈՒՏԻ**  
**Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

**- ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Կիրակի, 28 Յունիս 2009-ին, յընթացս սուրբ եւ անմահ Պատարագին, Թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս Հայրապետական Մաղթանք պիտի կատարուի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման տասնչորրորդ տարեդարձին առթիւ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ մատուցուող Ս. Պատարագին, պիտի կատարէ հայրապետական մաղթանքը եւ պիտի փոխանցէ իր պատգամը: Ս. Պատարագը պիտի մատուցանէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Վիգէն Աւ. Զինյ. Վասիլեան:

Յայտնենք, որ Պատարագին ներկայ պիտի ըլլայ նաեւ Հայաստանի մօտ Ա. Մ. Նահանգներու դեսպան Մարի Եովանովիչ որ կարճատեւ այցելութեամբ մը կը գտնուի Լոս Անճելըս:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի գաւազները խումներամ ուղղուելու մեր եկեղեցիները եւ աղօթք բարձրացնելու Վեհափառ Հօր քաջառողջութեան ու արեւշատութեան համար:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY**  
**AND PONTIFICAL THANKSGIVING PRAYERS**  
**AT ST. GARABED CHURCH IN HOLLYWOOD**

On Sunday, June 28<sup>th</sup>, the 14<sup>th</sup> anniversary of the election and consecration of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, will be observed in all Prelacy churches. By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Pontifical thanksgiving prayers (*Hayrabadagan Maghtank*) will be offered on this occasion in our churches.

The Prelate will preside over Divine Liturgy and Pontifical prayers at St. Garabed Church in Hollywood, and will also deliver the sermon. The Liturgy will be celebrated by Archpriest Fr. Vicken Vassilian.

Her Excellency Ambassador Marie Yovanovitch, who is currently in Los Angeles to meet with the Armenian community, will be in attendance.

\*\*\*

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ ՆՈՒԱՃԵՑ ՍԻՐՏԵՐՆ ՈՒ ԲԵՍԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2009 տարին հռչակած է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ եւ այս ծիրին մէջ բազմաթիւ նախաձեռնութիւններ տեղի կ'ունենան:

Վեհափառ Յայրապետի պատգամին ընդառաջելու նախաձեռնութիւններուն ու ձեռնարկներուն ծիրին մէջ, Ազգային Առաջնորդարանս վերակազմած է «Լուսավորիչ» երգչախումբը, որ ունի 45 երիտասարդ անդամներ: Երգչախումբը Յինգշաբթի, 25 Յունիսի երեկոյեան ժամը 7:30ին, Կլենտէյլ Փրեսաիթերիըն եկեղեցւոյ մէջ հանդես եկաւ համերգով մը:



Ձեռնարկը կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Խմբավարն էր Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան:

Բարի գալուստի խօսք արտասանեցին Սուրեն Սրկ. Յագարեան եւ Օր. Մերի Մելքոնեան:

Յայտագիրը կազմուած էր հոգեւոր, ժողովրդային ու ազգային երգերէ: Ներկաները գոհունակութեան եւ գնահատանքի ծափերով ողջունեցին երգչախումբն ու մենակատարները:

Առաջնորդ Սրբազան Յօր օրհնութեան խօսքով եւ աղօթքով ձեռնարկը հասաւ իր աւարտին:

(Համերգին լրիւ թղթակցութիւնը շուտով):

## PRELACY “LOUSAVORICH” YOUTH CHOIR PERFORMS TO GREAT ACCLAIM

In response to the proclamation of 2009 as the Year of the Youth by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, events dedicated to our youth have taken place and will be taking place throughout the year within the Prelacy.

One such event was the first performance of the newly formed “Lousavorich” youth choir, which took place on the evening of Thursday, June 25<sup>th</sup>, at Glendale Presbyterian Church.



The choir, comprised of forty-five youth, was led by Very Rev. Fr. Barthev Gulumian.

The evening began with welcoming remarks by choir members Suren Hazarian and Merry Melkonian. The choir

presented a repertoire of songs from a variety of musical genres including spiritual, folk, patriotic, traditional, and anthems.

The evening came to a close with the Prelate’s remarks and blessings, and benediction.

Detailed press release to follow.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Յ.Ս.Ը.Ս.-Ի 34-ՐԴ ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Շաբաթ 27 Յունիսի երեկոյեան, Studio City-ի CBS Studio-ին մէջ տեղի պիտի ունենայ Յ.Ս.Ը.Ս.-ի 34-րդ Նաւասարդեան խաղերու յաղթանակի ճաշկերոյթը, կազմակերպութեամբ Յ.Ս.Ը.Ս.-ի Շրջանային Վարչութեան: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

Նաւասարդեան մարզախաղերու աւարտականները, փառատօսն ու փակման հանդիսութիւնը տեղի պիտի ունենան 2-5 Յունիսին, Պըրմինկիեմ Յայ Աթուլի համալիրին մէջ:

## **PRELATE TO ATTEND 34<sup>TH</sup> NAVASARTIAN VICTORY BALL**

The 34<sup>th</sup> Navasartian Victory Ball, organized by Homenetmen Regional Executive, will take place on the evening of Saturday, June 27<sup>th</sup>, at CBS Studio Center in Studio City.

The Prelate will attend and convey his blessings.

The 34<sup>th</sup> Navasartian festival will begin on Thursday, July 2<sup>nd</sup>, and culminate with the closing ceremony on Sunday, July 5<sup>th</sup>, at Birmingham High School

\*\*\*

## ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու խորհուրդի երիտասարդական երրորդ տարեկան համագումարը տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Յունիս 2009, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ յարկին տակ, հովանաւորութեամբ խորհուրդի անդամ երեք եկեղեցիներու թեմակալ Առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի (Հայց. Առաքելական եկեղեցի), Տ. Եւոհն Բափլան Արքեպիսկոպոսին (Ասորի ուղղափառ) եւ Տ. Սրապիոն Եպիսկոպոսի (Ղրպտի ուղղափառ), եւ մասնակցութեամբ այս եկեղեցիներու երիտասարդական միութիւններէն ներկայացուցիչներու:



Համագումարը սկսաւ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամերգութեամբ, զոր առաջնորդեցին Առաջնորդ Սրբազանները, մասնակցութեամբ երիտասարդական միութիւններէ անդամներու: Զարոգեց Տ. Յովնան Արք. Տերտերեան: Այնուհետեւ, մասնակիցները համախմբուեցան եկեղեցւոյ սրահին մէջ, ուր ողջոյի

խօսք արտասանեց Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդական խորհուրդի ատենապետուհի Սոֆիա Ալլաֆ: Ասորի ուղղափառ համայնքի Առաջնորդը ուղղեց օրհնութեան խօսք: Պատգամ մը ուղղեց Արեւմտեան Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ կանգ առաւ 21րդ դարու պայմաններուն մէջ երիտասարդներու դիմագրաւած դժուարութիւնները, ապա նաեւ խօսեցաւ զանոնք յաղթահարելու եւ շրջանցելու միջոցներուն մասին:

Ճաշի դադարէն առաջ, երիտասարդներուն համար կիրարկուեցաւ փոխադարձ ծանօթացման դաստիարակչական հաւաք մը. ներկաներէն իւրաքանչիւրը արտայայտուեցաւ սուրբ գրային տիպարի մը մասին, վեր առնելով անոր յարակցութիւնը մեր օրուան հարցերուն:

Ճաշէն ետք, երիտասարդները բաժնուեցան չորս խումբերու եւ ունեցան խորհրդածութիւններ, մեկնելով «Ես, անձս եւ Զրիստոս» բնաբանէն: Անոնք տեսակետներ փոխանակեցին 21րդ դարուն մէջ անանձնական ըլլալու եւ Զրիստոսի հետ կապը ամրապնդելու միջոցներուն մասին: Խմբակներէն մէկը վարեց Ազգ. Առաջնորդարանիս Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Ապա, խմբակները իրենց եզրակացութիւնները բաժնեկցեցան միասնաբար:

Համագումարի պաշտօնական յայտագիրը վերջ գտաւ ժամը 3:30ին, ապա երիտասարդները ունեցան մտերմիկ ու հաճելի ժամանցի պահ մը:

## PRELACY YOUTH PARTICIPATE IN THIRD ANNUAL ORIENTAL ORTHODOX CHURCHES YOUTH GATHERING

On Saturday, June 20<sup>th</sup>, 2009, youth from the Armenian, Coptic, and Syriac Orthodox Churches gathered at St. Gregory Armenian Apostolic Church in Pasadena for the third annual Oriental Orthodox Churches (OOC) Youth Gathering. The event is organized each year by the OOC Youth Delegates Committee to bring together youth from sister churches to participate in a day of prayer and fellowship.



The gathering took place under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops which is comprised of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Orthodox Church), and H.G. Bishop Serapion (Coptic

Orthodox Church).

The gathering began with morning prayers from the Book of Hours led by the Archbishops Mardirossian, Derderian, and Kaplan, and with the participation of clergy members and youth. The sermon was delivered by Archbishop Derderian.

Clergy and youth then headed to the church hall where welcoming remarks were delivered by Sophia Allaf, Chairlady of the OOC Youth Delegates Committee, followed by welcoming remarks by H.E. Archbishop Kaplan who conveyed his blessings to the youth.

In his message to the youth, H.E. Archbishop Mardirossian addressed and acknowledged the difficulties they face growing up in the 21<sup>st</sup> century, and offered his advice and guidance.

Prior to lunch, an ice breaker took place to bring the youth closer together through a fun and educational activity, where participants chose a character from the Bible and explained how they relate to that particular figure in today's times.

After lunch, the youth were split into four groups to participate in a discussion session led by one clergy member from each of the churches. Very Rev. Fr. Muron Aznikian led the discussion for the Prelacy.

The discussions related to the theme of the gathering "Me, Myself, and Christ", and focused on how youth in the 21<sup>st</sup> century can lose their selfishness and concentrate on building and strengthening their relationship with our Lord

Jesus Christ. Youth then had the opportunity to share with each other what they had learned from the discussion sessions.

The gathering officially came to a close at 3:30 p.m., after which youth were invited to participate in games and social hour.

\*\*\*